

ՄԱՐԱՔ ՄԾՈՒՐՆԱՑՈՒ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԵՐԿԸ (մ. թ. II դ.)

ԱՐԾՐՈՒՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ

Ի՞նչ ծավալ ու վերնագիր ունենալու Մարաք Մծուրնացու «Հայոց նախնական պատմությունը»: Այս հարցի շուրջ կարելի է դատել խորհրդանշանաբանական թաղվածքների հիման վրա:

Խորհրդանշանաբանական լեզուի աղբյուրների մեջ գլխավոր հեղինակություն ենթակայացող Մարաք Մծուրնացին կոչվում է պատմագիր, ժամանակագիր (I, ԻԴ), իսկ Սեբեոսի կողմից՝ ժամանակագիր¹: Հավանաբար նա այդպես է կոչվել նաև Փավստոսի «Պատմության»՝ դպրության մեջ:

Իսկ ի՞նչ վերնագիր է ունեցել, մի՞թե կոչվել է «Մենդաբանություն Հայոց Մեծաց» կամ «Ազգաբանություն Հայոց», թե՞ դա խորհրդանշանաբանական է, որովհետև վերջինս, իր իսկ ասելով, ընտրում է միայն իրեն համար պիտանին: Հետևաբար գուցե երկը պարզապես կոչվել է «Պատմություն Հայոց», հետագա վերնագրային ավանդույթի սկիզբը դնելով:

Բարեբախտաբար խորհրդանշանաբանական շնորհիվ հայտնի է նաև Մարաք փրկիսոփայի երկի վերնագիրը՝ «Հիւսուսան պատմության պիտոյից», որն ինչպես կասվի ստորև, թյուրիմացաբար ընկալվել է իբրև Մարաքից անկախ աղբյուր: Խորհրդանշանաբանական թաղվածքի պարզ երևում է, որ Մարաք Մծուրնացու «Պատմությունը» ավելի լայն ծրագրով էր շարադրված, քան ազգաբանությունը է: Այն սկսվում է մարդկության ընդհանուր նախնիներից, ներառում է Հայկի ազգաբանությունը՝ հայոց նահապետներով, շարունակվում Տիգրան Երվանդյանով, հասնում է մինչև Արշակունիների հաստատումը նախ իրանում, ապա Հայաստանում: Ըստ խորհրդանշանաբանական Մարաք Մծուրնացու տեղեկություններն ավարտվում են Հայոց 2-րդ Արշակունի թագավոր Արշակով. «Աստանոր սպառին բանք ծերունւոյն Մար Աբայ Կատինայ» (II, Թ):

Մարաք Մծուրնացին, լինելով արքունիքի հանձնակատար, պետք է իմանար, որ Ալեքսանդր Մեծից 60 տարի հետո իշխանություն գրաված պարթևները չէին կարող անմիջապես ժառանգաբար իշխել Հայաստանում, բայց, հավանաբար տուրք տալով հայոց Վաղարշ II թագավորի փառասիրությունը, խմբագրել, փոփոխագրել է պատմությունը: Գուցե և ինչ-որ տեղ պատվեր է կատարել՝ ցույց տալով, որ դեռևս Հայաստանի առաջին Արշակունիների օրոք գահը ժառանգական էր: Այդ դեպքում պետք է կարծել, որ Վաղարշակի և նրա ժառանգորդ որդի Արշակի անունները գալիս

¹ Պատմ. Սեբ., էջ 52:

են Մարաբ Մծուրնացուց, ոչ թե Խորենացուց, ինչպես գրվել է վերը: Արդյո՞ք Վաղարշ II-ին պատիվ էր բերում իր թագավորական ժառանգությունը սկզբնավորողի անունը կրելը, դրա համար էլ Մծուրնացին հայկական Արչակունիների հարստության հիմնադիր է կոչել Վաղարշակին:

Պատմության նման այլափոխման արդյունքում ստացվում է, որ Վաղարշ II-ը նախնի անվանակցի հաստատած կարգը վերականգնում է: Սեբեոսի քաղմամբ ևս Մարաբ Մծուրնացու «Պատմությունը» հասնում է մինչև Արչակունիների իշխանության հաստատումը Իրանում (Արչակ Մեծ) և Հայքում (Արչակ Փոքր), որին էլ հակադրում են իբր Ագաթանգեղյան արձանագրությունից հանված երկու արքայացանկերը՝ իբր հավելված, որով էլ փակվում է Մարաբի մատյանը:

Ակնհայտ է, որ Սեբեոսը Մարաբից քաղում է շատ համառոտակի, այն էլ մի նպատակով. որ շուտ հասնի Բագրատունիների նախնու ծագմանը և արքաների անունների թվարկմանը: Մարաբ Մծուրնացու «Պատմությունը», իբրև աղբյուր, էական տեղ ու դեր չունի Սեբեոսի ծրագրում: Այդ աղբյուրի վրա հավանաբար չեղտադրում են արել պատվիրատուները՝ կա՛մ իշխանական, կա՛մ կաթողիկոսական աթոռներից: Դրա համար էլ Սեբեոսը, ի տարբերություն Խորենացու, շատ թուուցիկ է անցնում Մարաբի «Մատյանի» վրայով: Բայց այդ թուուցիկ անցումն էլ շատ արժեքավոր է Խորենացու հետ համադրելու և Մարաբի «Պատմության» մասին դատելու համար, ինչի առաջին օրինակներից մեկը, ինչպես արդեն նշվեց, տվել է Ստ. Մալխասյանցը: Իրականում երկու պատմիչների կատարած մարաբյան քաղվածքների համադրումը ցույց է տալիս, որ Մարաբի Պատմությունը V դ. չի թարգմանվել հայերեն, որ երկու հեղինակներն էլ (Փավստոս, Խորենացի) այն կարդացել են հունարենով և նրանց հայերեն թարգմանություններն էլ տարբերվել են իրարից, ինչպես երկու տարբեր խմբագրություններ: Այսինքն խմբագրությունների խնդիր չկա, կա մեկնաբանությունների խնդիր:

Արդյո՞ք Պրոկոպիոս Կեսարացին ծանոթ է եղել Մարաբի գրքին, ինչպես հաստատամտորեն ասում է Գ. Սարգսյանը¹: Նա, անկասկած, հենվում է Ն. Աղունցի այն դատողության վրա, ըստ որի՝ Արչակունիների 500-ամյա

* Այս երևույթը հիշեցնում է III դ. սկզբներին Օսրոնի Աբգար IX թագավորին, ով պետականորեն ընդունելով քրիստոնեությունը, այն վերագրել տվեց I դ. թագավոր Աբգար V-ին, որը ժամանակակից էր առաքյալներին:

Երկու թագավորները, իրենց գործերը նախորդներին վերագրելով, փորձում էին դրանք ավելի վավերականացնել և սրբացնել: Կամ էլ, ինչպես նշվեց, Մարաբի մոտ առաջին Արչակունից Յաստատունը ներկայացվել է «Արչակ» տիտղոսով, հետևաբար, անանուն, իսկ Խորենացին այն վերականգնել է իբր Վաղարշակի իր վերոհիշյալ տրամաբանությամբ:

¹ Ист. Ар. М. X., пер. введение и примеч. Г. Саркисяна, Ер., 1990, примеч. 67, с. 223.

իշխանություն մասին հիշատակությունը Պրոկոպիոսը կարող էր վերցնել միայն «Հայոց Պատմությունից», որովհետև ուրիշ ոչ մի գրականության մեջ նման տվյալ չկա¹: Իրականում, իհարկե, այդպես չէ: Ադոնցի այս դիտարկումը դիպուկ է միայն նրանով, որ Պրոկոպիոսն, իրոք, օգտվել է Փավստոսի «Հայոց Պատմությունից», բայց վերոբերյալ տվյալը նա չէր կարող քաղել Փավստոսի կորած I-II դարում լուրջներից, որոնք բովանդակություններ համապատասխանել են Մարաբ Մծուրնացու «Պատմությանը», որովհետև 500 տարվա պատկերացումը հատուկ է միայն Սեբեոսին և ոչ Փավստոսին ու Խորենացուն: Պարթև Արշակունիների կառավարման տարիների գումարը կազմում է 502՝ ըստ Սեբեոսի ազաթանգեղոսյան արձանագրության, որով հեղինակը փորձել է շարունակել և լրման հասցնել Մարաբի նշած առաջին պարթև և հայ Արշակունիներին՝ Արշակից ու Վաղարշակից մինչև Պապի որդիներ: Իսկ Խորենացու արքայացանկով պարթև թագավորների իշխանության տարիների գումարը կազմում է 470 (460՝ ըստ Ադոնցի ընթերցման)²:

Ն. Ադոնցի մեջբերած հատվածից ընդամենը երևում է, որ Պրոկոպիոսը Փավստոսի միջոցով Մարաբից գիտի մինչարշակունյան հայ թագավորների մասին: VI դ. հուլյն պատմիչը, Փավստոսի առաջին դարում լուրջներից իմանալով Մարսյակի առասպելը, զգուշացնում է, որպեսզի ընթերցողը չկարծի, թե Արշակունիները սերում են հայերից, պարզապես «պարսկական թագավորներից մեկը Հայաստանում թագավոր կարգեց Արշակ անունով յուր եղբորը, ինչպես այդ մասին պատմվում է Հայոց Պատմության մեջ: 500 տարվա ընթացքում նրանց միջև խաղաղություն էր տիրում շնորհիվ ազգակցության»³: Այսինքն, Պրոկոպիոսը հնարավոր չի համարում, որ հայ պատմիչը, ելնելով Մարսյակի վերաբնակեցման և Մասիսի անվանադրման ավանդությունից, Արշակունիներին սխալմամբ վերագրի հայկական ծագում: Ուստի Ադոնցի նշած պրոկոպիոսյան արտահայտությունը («Եվ սակայն չպետք է կարծել, որ Արշակունիները սերում են հայերից») նետված չէ «նախնական պատմության» կամ Փավստոսի դեմ: Այն ուղղված է ընթերցողին՝ ի գիտություն:

Մեջբերենք Պրոկոպիոսին՝ ըստ Ն. Ադոնցի թարգմանության՝ մեր կողմից արված համապատասխան մեկնաբանական ընդմիջարկումներով:

«Անցյալում հայերը թագավոր են ունեցել իրենց ցեղից, ինչպես այդ մասին վկայում է հնագույն պատմությունը, - նկատի ունի Փավստոսին: -

¹ Ադոնց, էջ 280-81:

² Անդ, էջ 264:

³ Անդ, էջ 280:

Երբ Ալեքսանդր Մակեդոնացին գահընկեց արեց պարսից թագավորին, պարսիկները հնազանդվեցին և հանդարտվեցին,- պետք է հասկանալ՝ նրանց հետ նաև հայերին, - իսկ պարթևները ապստամբեցին մակեդոնացիների դեմ և, հաղթելով կռվում, վճռեցին նրանց և տիրացան մինչև Տիգրիս գետն ընկած հողերին: Այսուհետև նրանցից էր կախված Պարսկաստանի ճակատագիրը 500 տարվա ընթացքում, ընդհուպ մինչև հռոմեացիների կայսր Մամայայի որդի Ալեքսանդրի գահ բարձրանալը: Այդ նույն ժամանակ,- այսինքն թագավորություն սկզբին,- պարսկական թագավորներից մեկը Հայաստանում թագավոր կարգեց Արշակ անունով յուր եղբորը, ինչպես այդ մասին պատմվում է «Հայոց պատմության» մեջ,- այսինքն՝ Փավստոսի, ով Մարաբից գիտեր, որ այդ Արշակը պարթև արքայի եղբայրն էր: - Եվ սակայն, չպետք է կարծել, որ Արշակունիները սերում են հայերից,- զգուշացնում է ընթերցողին, որպեսզի վերջինս Մարսյակի առասպելի ազդեցությամբ Արշակունիներին տեղաբնիկ չհամարի: - 500 տարվա ընթացքում նրանց միջև խաղաղություն էր տիրում շնորհիվ ազգակցության, - այսինքն, համարում է, որ զուգահեռ իշխել են թե՛ Իրանում, թե՛ Հայքում, - Հայոց թագավորը նստում էր այսպես կոչված մեծ Հայքում՝ հնուց ի վեր գտնվելով հռոմեական կայսրերի ենթակայության ներքո»¹:

Թե որտեղից Պրոկոպիոսին 500-ամյա իշխանության մասին տվյալը, դժվար է ասել, համենայն դեպս ավելի հեշտ է ենթադրել հունական աղբյուր, քան հայկական: Ավելին, կարելի է կարծել, որ Սեբեոսի ազատագրող շարժման արձանագրությանը վերագրված 502 տարիները բխում են Սեբեոսին հայտնի որևէ հունական սկզբնաղբյուրից, եթե ոչ հենց Պրոկոպիոս Կեսարացուց: Վերջինիս աղբյուրի մեջ 500-ամյակը կարող էր հաշվարկվել ոչ թե Ալեքսանդր Մեծի մահից, այլ նրա կողմից Պարսից գահը նվաճելուց 60 տարի անց, ինչը հետագայում ընկալվել է իբրև Սելևկյան թվականության 60 թ.: Ինչևէ, կարևորն այն է, որ Պրոկոպիոսը «Հայոց պատմության» իմացել է մինչարշակունյան թագավորների գոյության, Հայքում Արշակունիների վաղ հիմնավորման և Մարսյակի ու Արշակունիների կապի մասին:

Ակնհայտ է, որ Մասիսի անվանադրման մասին եղել է երկու տարբերակ. մեկը վաղ հայկական կապված Ամասիա նահապետի անվան հետ, ինչպես պատմում է Մարաբ Մծուրնացին և նրա հետևողությամբ՝ Խորենացին, մյուսը՝ Արշակունյան հետագա ժամանակի (IV դ.), որի նպատակն էր թագավորական ընտանիքի ծագումը կապել ս. Գրքի և Աբրահամի հետ՝ Մարսյակ որդու միջոցով, և որը, ի տարբերություն Մարաբ Մծուրնացու, մեջբերել է երևի Փավստոսը, քանի որ այդ տարբերակը աղոտ ծանոթ է

¹ Ն. Աղոնց, Երկեր, հ. Բ, Եր., 2006, էջ 280:

Պրոկոպիոսին: Երկու տարբերակներում էլ, սակայն, Մասիսի անվանադիր նախնին ունի երեք որդի: Ըստ Մարաբի և Խորենացու՝ Ամասիայի որդիներն են՝ Գեղամ, որից Գեղ լեռ, Գեղարքունի, Գեղամա ծով, Փառոխ, որից Փառախոտ, Յոլակ, որից Յոլակերտ: Ըստ Փավստոսի և Սեբիոսի՝ Մարսյակի (կամ ըստ Մալխասյանի՝ Մասեքի) որդիներն են՝ Փառոխ, որից Փառոխոտ և Փառական, մյուս երկու որդիների անունները վկայված չեն, որովհետև Սեբեոսի մոտ բնագրային այս հատվածը պակասավոր և իր տեղից ընկած է: Հավանաբար այն պետք է տեղադրել Արայի մահից հետո, «Յայնժամ տիրեաց Շամիրամ...» տողից առաջ՝ հաշվի առնելով, որ Սեմի և Հաբեթի սերնդաբանական ցանկերում Աբրահամն ու Արան իրար համապատասխանում են ժամանակով:

Վերջապես քիչ է հավանական, կամ ավելի շուտ անհնար է, որ երկու տարբերակների գրառողն էլ լինի Մարաբ Մծուրնացին, բայց Փավստոսը և Խորենացին տարբերվեն իրենց նախընտրած պատումներով: Անհնար է, որովհետև Խորենացին Արշակունիների պարթևական ծագման և Մարսյակի առասպելի միջև հակասություն կտեսներ և կարճազանքեր. նա գիտի պարթևական թագավորական տան և Աբրահամի հարձածին զավակ Քետուրայի կապի մասին, և համարում է, որ վերջինիս սերունդներին ուղղված աբրահամյան մարգարեությունը (Ծննդ. ժէ 7, 17) ի դեմս Արշակունիների կատարվեց. «Թագաւորք ազգաց ի քէն ելցեն» (Մ. Խ., 11 Ա): Վերջապես լրիվ անհնար է, որ Մասիսի անվանադրման երկու տարբերակները բխեն Մարաբից, որովհետև կա մի հակասություն ևս արդեն Սեբեոսի մոտ: Բանն այն է, որ Բագրատունիների ծագման մասին եղած տողերը, եթե անգամ անադարտ էին դեռևս Փավստոսի գրքում, շատ անորոշ են և ընդմիջարկման տպավորություն են թողնում: Այս դեպքում ընդմիջարկողը Փավստոսն է, որովհետև նրան անզուսպ հակաճառում է Խորենացին առանց անունը տալու: Դատելով Սեբեոսի մոտ եղած հատվածից՝ ընդմիջարկող Փավստոսը չի նկատել, որ եթե Բագրատունիները սերում են Հայկից, ապա պետք է նրանց անունով որևէ տեղանուն լինի, իսկ նրանց իրական-պատմական ժառանգությունը համարվող Անգեղը, ըստ Մարաբի և Խորենացու, կապված էր Տուրք Անգեղեայի անվան հետ: Դեռ ավելին, սերնդափոխությունը տրված է շատ անորոշ, ի տարբերություն Խորենացու հստակ թվարկման, լեզուն էլ անհստակ է, վերջնական եզրահանգումն էլ անկապ. «Եւ որդիքն Բագարատայ ժառանգեցին զժառանգութիւնս իւրեանց ի կողմանս արեմտից, այս ինքն է Անգեղ տուն, վասն զի կոչեցաւ Բագարատ և Անգեղ, զոր ի ժամանակին յայնմիկ ազգ բարբարոսացն աս-

տոած կոչեցին»¹: Ավելորդ է ասել, որ եթե հեղինակը լիներ Մարաբ Մծուրնացին, ապա քրիստոնյայի տեսակետից չէր գրի «ազգ բարբարոսացն», քանզի նա հեթանոս էր, ուստի այստեղ կարելի է տեսնել V դ. քրիստոնյա ընդմիջարկողի՝ Փավստոսի ձեռքը: Բացի այդ պարզ չէ, թե աստված էր կոչվում Բագարա՞տը, որ նշանակում է աստուծո տված, թե Անգեղը, որ նշանակում է հրեշտակ կամ էլ, ինչպես նշված է, աստված՝:

Այսպիսով, Պրոկոպիոս Կեսարացին Մարաբ Մծուրնացու «Նախնական պատմութիւննից» օգտվում է Փավստոսի միջոցով: Հետևաբար ստացվում է Մարաբի «Պատմութեան» երկու խմբագրութիւն՝ ըստ նրա հունարեն բնագրից օգտվողների՝ Փավստոսի (դպրութիւն), Խորենացու (գիրք I): Եթե 2-րդը մեզ է հասել ամբողջովին, ցավոք առաջինը կորել է և նրա մասին դատում ենք հետագայի քաղաքումներով՝ Պրոկոպիոս Կեսարացու (VI դ.) և Սեբեոսի: Երկուսն էլ իրենց ձեռքի տակ չեն ունեցել Մարաբի հունարեն գիրքը: Սեբեոսը, հատկապես, պատրանք է ստեղծում, թե Միջագետքում լինելով՝ կարող էր ընթերցել այն, դեռ ավելին, նրա մեջ կարգալ «Ագաթանգեղյան» երևակայածին արձանագրութիւնը: Իրականում Հայկյան շրջանի մասին Սեբեոսը կարող էր գրել Փավստոսի կորած դպրութիւնների հիման վրա, որոնց աղբյուրի անունը՝ Մարաբ փիլիսոփա Մծուրնացի, Փավստոսից իմանալով, հակադրել է Խորենացու Մար Աբաս Կատինային այնպես, ինչպես հակադրվել է մյուս հայտնի հարցերում: Բայց Սեբեոսը ցանկացել է Մարաբ Մծուրնացուց քաղաքը առանց միջնորդի, նրա աշակերտների միջոցով իբր ձեռք բերելով նրա «Մատյանը», որպեսզի այդ Մատյանում կարգա նաև, ավելի ճիշտ՝ հատկապես, Ագաթանգեղյան արձանագրութիւնը: Ահա՛ Սեբեոսի և Մարաբի կապի բուն պատճառը: Եվ իրոք, եթե չլիներ Մարաբի մատյանը Միջագետքում գտնելու հնարանքը, Սեբեոսն ինչպե՞ս էր հիմնավորելու Ագաթանգեղյան արձանագրութիւն մասին ողջ կեղծիքը: Չէ՞ որ չէր կարող վկայակոչել Մծուրքից Տիգրան տարված այն սյունը, որի վրա գտնված էր արձանագիրը: Դա կարող էր հեշտորեն հերքվել այլ արքունականների միջոցով: Մնում էր միայն այն վերագրել Մարաբի մատյանին՝ իբր ավելացված նրա աշակերտների կողմից այն ժամանակ, երբ ավերակից հանվեց արձանագիր սյունը: Հանգամանք, որ անհնար է հերքել, թեկուզ հերքելի է բովանդակապես, բայց դա արդեն դուրս է կեղծարարի մտահոգութիւնից, որովհետև նա խոսում է ոչ թե գիտական, այլ միջնադարյան լսարանի համար:

Արդ, թե որոնք են Փավստոսից քաղված մարաբյան էջերը Սեբեոսի Պատմութեան մեջ, այսօր կարելի է սահմանադատել (թվարկումը տրվում է

¹ Սեբ., Ա, էջ 51:

* Այս հարցը հիմնավորապես արժարծվում է մեր այլ հոդվածում:

ըստ Գ. Աբգարյանի հրատարակության), իհարկե ոչ բառացի իմաստով: Դրանք են.

գլ. Ա, էջ 48, տ. 5-32, էջ 49, տող 1-35, էջ 50, տ. 1-37, էջ 51, տ. 1-36, էջ 52, տ. 1, տ. 3-10 (պակասավոր և տեղից ընկած), տ. 14-31, էջ 53, տ. 1-35, էջ 54, տ. 1-15: Ընդամենը 213 տողանոց հատվածի մեծ մասը, պետք է կարծել, որ Փավստոսի կամ Սեբեոսի բառերով է, մի մասը վերագրվել է Մարաբին, օր. Բագրատունիների, երևի նաև Մարսյակի մասին եղածը: Իսկ հավելվածը՝ պարթև և հայ Արշակունիների ցանկերով իբր քաղված ազգաթանգեղյան արձանագրությունից (էջ 54, տ. 21-36, էջ 55, տ. 1-5), Սեբեոսը Մարաբին չի վերագրում, այլ զատում է նրանից՝ ասելով նախաբանում. «Ձոր փոքր մի և ապա յիւրում տեղոջն տեսցես զպատճենն» (էջ 47, տ. 25-26): Մարաբը նշված էլերում հղվում է երկու անգամ այնպես, երևի ինչպես Փավստոսի մոտ է եղել. առաջինը՝ «Քանզի զսոյն ճառէ ժամանակագիրն (էջ 52, տ. 2), երկրորդը՝ «ասէ» (էջ 53, տ. 28): Ի տարբերություն շատ հեղինակների (Ն. Մառ, Գր. Խալաթյանց, Ստ. Մալխասյանց, Ն. Ակինյան, Ն. Ադոնց և այլն) Ա. Զամինյանը նշված հղումների հասցեատեր է համարել, հիրավի, Մարաբ Մծուրնացուն¹:

Իսկ թե որոնք են Մ. Խորենացու «Հայոց Պատմության» մարաբյան էջերը, վաղուց հայագիտության մեջ արժանացել են բազմակողմանի ուշադրության և նշվել են | գրքի գլուխների մեծ մասը և || գրքի սկզբներից մինչև Ժ (10) գլուխը:

Մարաբի Պատմությունից առնված հատվածների մեջ հանիրավի անտեսվել են | գրքի ԻԴ-Լ գլուխները, այն է՝ Տիգրանի և Աժդահակի վիպասանքը, որի վրա արժե նորից հրավիրել հետազոտողների ուշադրությունը:

Հայագիտության մեջ բազմիցս քննարկվել է Խորենացու՝ Տիգրանի մասին պատմությունը և նրա աղբյուրները՝ «Ի հիւսման պատմութենէ պիտոյից» (I, ԺԹ): Մի քանի վաստակավոր հայագետներ (Մ. Աբեղյանն իր հետևորդներով) կարծել են, թե այս հատվածի աղբյուրը (Հիւսումն պատմության պիտոյից) ոչ թե Մարաբ Մծուրնացին, այլ ինչ-որ հագներգություն է՝ գրված ներբողաբար, որի հեղինակն անհայտ է, երբեմն էլ ենթադրվել է Դավիթ Անհաղթը (օր. Ստ. Մալխասյանցի կողմից):

Իբր թե այդ քառամաս հագներգությունը՝ «Հիւսումն պիտոյից» անունով, ունեցել է մի հեղինակ, «արգասավոր ի Բանս» և «իմաստնագոյն ի մեջ իմաստնոց»: Դեռ ավելին, ըստ Աբեղյանի, այդ արգասավոր հեղինակի վիպական ճառագրության համար տեսական հիմք է ծառայել հույն հեղինակ Ափթոնիոսի «Պիտոյից գիրքը», որի հայերեն հայտնի թարգմանությունը կատարել է, հավանաբար, Մովսես Խորենացին:

¹ Աբգարյան, ծան. 37, 50:

Իրականում պատկերն այլ է և այն ճշգրիտ վեր հանելու նպատակով հետևենք պատմահոր շարադրանքին քայլ առ քայլ՝ սկսած 1 գրքի ժԸ գլխից:

Այստեղ Խորենացին կողք կողքի է դնում Մարաբի և Կեփալիոնի պատմածները Շամիրամի մասին և առավել հավաստի համարում առաջինին, «քանզի ոճով իմն ասէ և գպատճառս պատերազմին յայտնէ» (II, ԺԸ): Բացի այդ, ըստ Խորենացու, Մարաբի պատմածը հաստատում են նաև «մեր աշխարհի առասպելները», որոնք հայտնի էին թե՛ Խորենացուն, թե՛ «Բագմահմուտ ասորի» կոչված Մարաբին: Ապա Խորենացին ժԹ գլխում անցնում է դրանից հետո եղած նյութին՝ դարձյալ չմոռանալով իր աղբյուրաբանական սկզբունքների մասին. ոչինչ իր կողմից չի հորինում, այլ տալիս է այն, ինչ գրքից է, կամ գրքի նմանողությունը՝ այն, ինչ «իմաստուն և այդ հարցերում քաջախոհ այրերի խոսքերից է: Այսինքն, ինքը գրքի հանդեպ ուղղամիտ ու անպարտ է, իսկ թե որքանով է ուղղամիտ իր աղբյուրը՝ աստծուն է հայտնի: Բայց և այնպես ստուգելու մի չափանիշ ունի՝ երեք ազգերի ծննդաբանական ցանկերի համապատասխանությունը սերունդների թվով, որ ցույց է տալիս աշխատություն հավաստի լինելը: Ապա գրում է. «... սկսայց քեզ և որ ինչ գկնի այսոցիկ ի հիւսման պատմութենէ պիտոյից» ու պատմում է Շամիրամի մահից հետո եղած անցքերը: Թուուցիկ հայացքից կարող է թվալ, թե աղբյուրը փոխվում է. «... կսկսեմ քեզ պատմել և այն, ինչ սրանցից հետո եղավ՝ պիտանի բաների պատմության հյուսվածքից (շարադրանքից – Ա. Ս.):»: Արդեն ասվեց, որ Մարաբը այլալեզու դիվանից քաղել է իրեն պիտանի բաները, իսկ Խորենացին Մարաբից ընտրել է իրեն համար պիտանին:

Ճիշտ է, այդ կերպ ինֆորմացիան նվազում է, բայց նրա պահանջարկը կամ որևէ իմաստի հրատապությունը չհետվում է II-V դարերի համար:

Արդ, աղբյուրը փոխվում է թէ՛ ոչ, երևում է պատմիչի հետագա տողանցումներից: Խոսելով Շամիրամի և Արայան Արայի մահվան մասին՝ պատմիչը պետք է հիշատակի վերջինիս որդուն՝ Անուշավան Սոսանվերին, ըստ Խորենացու՝ սոսիներին նվիրվածին, մինչդեռ սպասելի էր՝ սոսիներից նվիրվածին (Սոսատուր), ըստ սրբազան պաշտամունքային ավանդույթի: Ահա, այդ անցումն սկսում է հետևյալ կերպ.

«Բայց յարէ գկարգ բանից գկնի այսորիկ օրինակ գայս» (I, Ի): «Բայց հարում է (չարունակում է, ո՞վ – Ա. Ս.) խոսքը սրանից հետո այս կերպ (այսպես – Ա. Ս.):»: Իսկ երբ ավարտում է Անուշավանի մասը, հարում է. «Այլ կարի շատ լինի, եթէ գամենայն, որ ինչ արժանն իցէ, ասիցեմք ի ճառիս նախակարգելոց արանց գբանս և գգործս» (I, Ի), որն էլ անմիջապես շարունակվում է արհեստականորեն բաժանված ԻԱ գլխում. «Թողլով գոչ

կարևորագույնսն ի բանից՝ ասասցուք որ ինչ հարկաւորն է» (1, ԻԱ): Փաստորեն, աղբյուրի հեղինակը ներկայանում է III դեմքով՝ «յարէ», ինչպես նախորդ էջերում՝ ասէ, պատմէ և այլն, բնորոշվում է իմաստուն, բազմա-հմուտ, արգասավոր, իսկ նրա գրվածքը՝ պատմութիւնը, կոչվում է նաև «կարգ բանից», «հիւսումն բանից», որի մեջ ավելի շատ պատմական նյութ է եղել, քան խորենացին ներկայացրել է՝ ոչ կարևորը թողնելով, հարկավորը ընտրելով:

Բայց ահա խորենացին չի գլանում մանրամասները ներկայացնելուց այն ժամանակ, երբ աղբյուրի մեջ հասնում է մեր բնիկ թագավորների մասին պատմող էջերին:

«Եւ այժմ ահա գոարճացայց, ոչ փոքր ինչ կրելով խնդութիւն, հասանելով ի տեղիս, յորում մերոյ իսկ բնիկ նախնւոյն սերունդք ի թագաւորութեան հասանեն յաստիճան: Վասն որոյ արժան է մեզ աստանոր մեծ գործ կատարել, և բազումս ասել առարկութիւնս ճառից, զորոց մեզէն իսկ զհիմունս (կարգա՝ զհիւսմունսս – Ա. Ս.) այսպիսեաց բանից ընթեռնուլ արժանավորեցաք ի չորս հագներգութիւնս, զարգասաւորին ի բանս և զիմաստնոյն իսկ, և ի մէջ իմաստնոց իմաստնագունին» (1, ԻԱ):

Այստեղ նույնանում են, իբրև միևնույն աղբյուրի բնորոշում, «հիւսումն պիտոյից» և «հիւսումն բանից» կապակցութիւնները, հետևաբար «արգասաւոր ի բանս» հեղինակը Մարաբ Մծուրնացին է:

Սեփական թագավորական պատմութիւն սկիզբը դնելով խորենացին գրում է, որ իր մեկենասը թող չզարմանա, եթե այդ բաները ուրիշներն այլ կերպ են պատմում, որովհետև այս հարցում ևս, ինչպես առաջին ճառերում, ամբաստանելի են մեր անիմաստասեր նախնիների բարքն ու ճաշակը: Նրանք չեն գրել իրենց հայրերի գործերը, ինչպես ուրիշները, դրա համար էլ միայն վերջերս են հավաքվել ի մի: Հասկանալի է, նկատի ունի Մարաբի Պատմութիւնը: Դե իսկ եթե ուշ են գրառվել, օրինաչափորեն պատվիրատուն հարց կառաջադրի՝ որտեղի՞ց. «Ապա եթէ ասիցես, ուստի՞ մեզ և զնախնեացն մերոց գիտել զանունս այսպես, իսկ զբազմաց՝ և զգործս, ասեմ՝ ի հնոցն դիւանաց Քաղղեացուց, Ասորեստանեայց և Պարսից, վասն մտելոց անոանց և գործոց նոցա ի քարտէս արքունի, իբրև գործակալաց և վերակացոաց աշխարհիս ի նոցանէ կացելոց և մեծաց կողմնակալաց» (1, ԻԱ): Ինչպես ենթադրվել է վերը, այս հարցը և պատասխանը խորենացին գտել է Մարաբի մատյանում և մեջբերել իր անունից՝ մոռանալով, որ նախապես Մարաբին վերագրել է միայն քաղղերենից հունարեն թարգմանված մեկ մատյանից օգտվելու հնարավորութիւնը: Ուրեմն մեր նախնիների անունները և նրանցից շատերի գործերը Մարաբը պեղել է արքունի դիվանի գործակալական մատյաններում եղած գրառումներից, բայց

այդ մասին խորենացին պարզ չի ասում, որովհետև այդ բացատրությունը պատվիրատուին է հղում իր անունից: Անցնելով առաջ՝ խորենացին շարադրում է ԻԲ հատվածն իր կողմից, իր զգայական վերաբերմունքով համեմված, Աստվածաշնչյան մեջբերումով ամրացված, մինչև հասնում է հայոց և մարաց արքայացանկերի զուգադրմանը, որը միանշանակ Մարաբից է: Ապա ԻԳ հատվածում խորենացին Տիգրանի պատմությունը դառնալուց առաջ նույն մատյանից լրացնում է որոշ բաց թողած տեղիներ Ասորեստանի թագավոր Սենեքերիմի որդիների՝ Սանասարի և Ադրամելեքի հայրասպան լինելու և Հայք փախչելու մասին. «Ի սմանէ, ասէ պատմագիրն, լինել զԱրծրունիս և զԳնունիս»: Իսկ հատվածն ավարտվում է Անգեղ տան հիշատակումով. «Բայց զԱնգեղ տունն, ասէ նոյն պատմագիր, ի Պասքամայ ումեմնէ ի Հայկայ թոռնէ լինել» (I, ԻԳ): Նույն պատմագիր կոչվածը Մարաբ Մծուրնացին է, որը շարունակում է ներկա մնալ և վկայակոչվել նաև «Տիգրան և Աժդահակ» վիպասանքի գլուխներում (ԻԴ – Լ) «ասէ», «ասացից», «երկայնեմ», «պատմի» միջարկություններով:

Այսպիսով, բոլոր դիտարկված գլուխների աղբյուրը Մարաբ Մծուրնացու «Պատմությունն» է: Ուստի, ելնելով խորենացու անուղղակի կրկնահիշատակումից, կարելի է վերականգնել Մծուրնացու գործի վերնագիրը՝ «Հիւսուամն պատմութեան պիտոյից»: Դեռ ավելին, կարելի է նաև կռահել, որ «Պատմությունը» բաղկացած էր չորս մասից՝ հագներգությունից, որոնք, ըստ հերոսների, կլինեն՝ Հայկ, Արամ, Արա գեղեցիկ, Տիգրան: Ի դեպ, խորենացին դրանցից երեքին առանձնացնում է իբրև սիրելի հերոսների՝ Հայկ, Արամ, Տիգրան, իսկ Արա գեղեցիկը քանի որ մյուսներից ոչ պակաս ծավալ էր գրավում, կարող էր դառնալ չորրորդ բաժնի հերոսը: Այնպես որ «Հիւսուամն պատմութեան պիտոյից» գիրքը ոչ մի կապ չուներ հայտնի «Պիտոյից գրքի» հետ, և Մ. Աբեղյանի մատնանշած զուգորդումները արդյունք են, մի կողմից, միջնադարագետի հետազոտական երևակայության, մյուս կողմից, ուչ հելլենիստական կրթական ավանդույթի տարածման, և ոճական ընդհանուր տեղիների միջժանրային կիրառություն: Պատահական չէ, որ «Պիտոյից գրքի» և Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի միջև նույն կարգի զուգորդումներ է նկատել նաև Կ. Մելիք-Օհանջանյանը՝ Մ. Աբեղյանի օրինակով (տե՛ս Մ. Աբեղյան, երկեր, հ. Գ, էջ..., Եր..., հմմ.: Корюн, Житие Мааштоца, предисл. К. Мелик-Огандэжанияна, Ер., ...):

Այլ հարց է, թե ինչու է Մարաբ Մծուրնացու պատմագրական երկը կոչվել «Հիւսուամն պատմութեան պիտոյից»: Արդեն ասվեց, որ պատմություն կարգը, հյուսվածքը ոչ բոլոր տեղեկություններն է ընդգրկում, այն պատմական նյութը շարադրում է ընտրողաբար՝ զատելով պիտանին անպիտանից: Թե որն էր համարվում «պիտանի», տվյալ դարաշրջանի գեղա-

գիտական ու բարոյագիտական հայեցակարգի հետ կապված խնդիր է: Մի բան պարզ է, որ վաղ քրիստոնեական աշխարհը նկատման մեջ կարևորվում էին ազգերի ու տոհմերի ծագումնաբանությունը, անունների կեղծ ստուգաբանությունը, հին աստվածների ու հոյարարքների էվհեմերիստական մեկնաբանությունը և այլն: Այս և այլ գիտանքները միասին կազմում էին պիտոլոյքների այն դաշտը, որի մեջ ամփոփվում էր ժամանակի ուսյալների հոգևոր-մշակութային զարգացումը: Պիտանի բաների ճանաչողությունը տարածվում էր նաև պատմագրություն ոլորտում, որտեղ գործում էր պատմական պիտոլոյքների գեղագիտությունը: Պատմական ամեն ինչ դեռ պիտոլոյք է: Պատմակերտություն արվեստը ենթադրում է ոչ միայն ոճավոր, ստուգապատում, պատճառաբանված շարադրանք, այլև բարոյակրթման ու ինքնակատարելացման նպատակներ: Խորենացին ևս դավանում էր հիշյալ ուշ հելլենիստական պատմագրական հայացքները, ի տարբերություն Սեբրիոսի, որը նշված «պատմակերտությունը» առանց կատարածաբանության համարում էր վարժ խոլզարկուի «կամայական պիտոլոյքների» համար գրքված պատմություն: Ուստի կարելի է ենթադրել, որ Մարաբ Մծուրնացին և Մովսես Խորենացին եղել են պատմագիտական նույն հայեցակարգի հետևորդներ, դրա համար էլ Խորենացին գովեստներ չի խնայել Մարաբի հասցին: Կարելի է նաև վստահ լինել, որ ինչպես Խորենացին, այնպես էլ Մարաբ Մծուրնացին է հպարտացել հայոց անցյալի նվաճումներով ու համակվել վեհացման զգացումով: Միայն թե Մարաբը գրել է հունարեն և բավարարվել է իր պատմածների հաստատումը ժողովրդի բանահյուսությունից մեջ գտնելով, իսկ Խորենացին կատարել է բառացի գրառումներ այդ իսկ բանահյուսությունից՝ կանխելով XVIII-XIX դդ. եվրոպացի բանահավաքներին, և թարգմանական մեջբերումներ՝ հենց Մարաբի գրվածքից: Օրինակ, բառացի գրառումներ են հայ առասպելավիպական բանահյուսության հատվածները, իսկ բառացի թարգմանություն է Մարաբի Պատմության վերնագիրը՝ «Հիսուսն պատմութեան պիտոլոյք», որը փայլում է կատարյալ հունաբանությամբ: Խոսքի հյուսվածք, հիսուսն բանից և նման այլ բառակապակցություններ կարելի է գտնել ժամանակի հունական իմաստասիրական, ճարտասանական ու քերականական, ինչպես նաև հայ հեղինակների՝ հենց Խորենացու, Դավթի և այլոց երկերում (հմմ. տեքստիլ = հյուսածո, տեքստ = խոսք – բան հյուսել = բանահյուս): Իսկ «պիտանի պատմություն կապակցությունը «հելենասիրության» ուժով երկար է ապրում, այն գտնում ենք անգամ X-XI դարերի հեղինակ Պետրոս Սիկիլիացու պատմական երկի վերնագրում, իհարկե, արդեն փոքր-ինչ այլ իմաստով:

* Հմմ. «պատմել» < պատել » և « շարադրել, շարագրել, շարահյուսել < շար(ել) բառերը: